ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն համայնք, ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Արագածոտն, 2-րդ փող. 1
շենք, Հեռ. (093) 809081 , aragatsotn.aragatsotn@mta.gov.am

N 42
11 հունիս 2019թ.

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան.

Ձեզ ենք ներկայացնում Արագածոտն մարզի Արագածոտն համայնքի ավագանու նիստի 2019թ.-ի հունիսի 10-ի թիվ 17,18,19 որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԵԼՍԻԿ ՂԱՋԱՐՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Շ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արագածոտն, (093) 809081, aragatsotn.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 17

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով Արագածոտն համայնքի ավագանին որոշեց հաստատել 2019թվականի հունիսի 10-ի նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն համայնքի վարչական տարածքում հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ:
2.ՀՀ Արագածոտնի մարզի արագածոտն համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՔՅԱՆ ԼՈՐԻՍ

ՋԱՐՈՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՋՈՐԻԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԵԼՍԻԿ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 17-Ն

« 10 » հունիս 2019 թվական

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով սահմանված պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 30-ի N41 դրական եզրակացությունը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները և դրան համապատասխան՝

ա) ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն համայնքի վարչական տարածքում գտնվող, «ԲԱՐԻ ԱՐԵՎ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, 8.4 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-017-0127-0029) գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության վարելահող և արոտավայր հողատեսքից (վարելահող՝ 6.33264 հա, արոտավայր՝ 2.06736 հա) փոխել և դարձնել էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության էներգետիկայի հողեր գործառնական նշանակության՝ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման համար.

բ) ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն համայնքի վարչական տարածքում գտնվող, «ՎԵՆՏՈՒՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, 17.0 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-017-0140-0106) գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության վարելահող և արոտավայր հողատեսքից (վարելահող՝ 2.00292 հա, արոտավայր՝ 14.99708 հա) փոխել և դարձնել էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության էներգետիկայի հողեր գործառնական նշանակության՝ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման համար:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետին համապատասխան իրականացնել համապատասխան գործողություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1. Ավետիկյան Լորիս
2. Կիրակոսյան Լուսինե
3. Մելիքյան Զորիկ
4. Զարոյան Գայանե
5. Մկրտչյան Արմենուհի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՂԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արագածոտն, (093) 809081, aragatsotn.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 18-ի թիվ 23 դրական ձեզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն գյուղական համայնքի ավագանին ***որոշում է՝***

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Արագածոտն գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմային /կցվում է որոշմանը/, որով նախատեսվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0225հա գյուղատնտեսական նշանակության արոտը /կադաստրային ծածկագիրը՝ 02-017-0182-0002/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կապի գործառնական նշանակություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասը օտարելու, այդ հողամասում շարժական կապի բջջային կայան տեղադրելու և գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու համար:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Արագածոտն գյուղական համայնքի ղկավարՄելսիկՂազարյանին:

1/ Ապահովել հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը,

2/Հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիքյան Լորիս

Կիրակոսյան Լուսինե

Մկրտչյան Արմենուհի

Զարոյան Գայանե

Մելիքյան Զորիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԵԼՍԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ**